# Քրիստոնյա Հայաստան

2016, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (469)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում դպրոցահասակ եւ ուսանող Մեր բոլոր զավակներին, մանկավարժներին, դասախոսներին, կրթության բնագավառի բոլոր պատասխանատուներին:*

*Օրվա խորհուրդն արտահայտում է մեր ժողովրդի ձգտումն ու սերը գիտության ու լուսավորության հանդեպ, որը դարձել է գրավականը ազգային մեր հարատեւության: Ուսումնական ամեն տարեմուտ մեր ժողովուրդը տոնում է բարի հույսերով ու սպասումով, որ կրթական հաստատություններից սփռվող գիտության լույսով պիտի ամրանան ու զորանան հոգին ու միտքը մեր զավակների: Կրթությունն ու իմացությունը Աստծուց տրված բարիք են, որպեսզի մարդը, ճանաչելով իր Արարչին ու աշխարհը, ապահով ու երջանիկ դարձնի իր կյանքի ընթացքը:*

*Աղոթում ենք, որ Տերը քաջարթուն միտք ու պայծառ հոգի պարգեւի Մեր սիրելի զավակներին եւ պահի հաստատուն աստվածային պատգամների շավիղներում, ուժ ու եռանդ շնորհի մանկավարժ-դասախոսներին եւ կրթության գործի բոլոր նվիրյալներին՝ կրթելու եւ դաստիարակելու ազգի արժանավոր ու շնորհաշատ զավակներ:*

*Թող Տիրոջ օրհնությամբ նոր ուսումնական տարին արգասավոր լինի առատ վաստակով՝ հանուն մեր հայրենիքի զորացման եւ մեր ժողովրդի առաջընթացի:*

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Հրաչյա Թամրազյանի սգակիր ընտանիքին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Թամրազյանների սգակիր ընտանիքին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանի մահվան կապակցությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցագրում ասվում է.

*«Ցավով տեղեկացանք բազմավաստակ մտավորական, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ տիար Հրաչյա Թամրազյանի անժամանակ մահվան մասին:*

*Հանուն Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության եւ պաշտոնեության՝ բերում ենք Մեր ցավակցությունն ու սրտակցությունը հանգուցյալի ընտանիքին, հարազատներին եւ Մատենադարանի տնօրինությանն ու աշխատակիցներին:*

*Գրական եւ ստեղծագործական բեղմնավոր կյանք ապրեց հոգելույս Հրաչյա Թամրազյանը՝ աստվածապարգեւ իր շնորհներով հարստացնելով հայ գրականության ու մշակույթի գանձարանը: Նրա հեղինակած մեկ տասնյակից ավելի բանաստեղծությունների ժողովածուները, թարգմանությունները, հայագիտական ուսումնասիրությունները, հատկապես Նարեկացիագիտությանը նվիրված մենագրությունները եւ գրականագիտական բազմաթիվ հոդվածները խոսուն վկայություններն են անվանի մտավորականի եւ շնորհալի հայորդու արդյունավոր վաստակի: Լուսահոգի գիտնականը երկար տարիներ աշխատեց ու ստեղծագործեց Մատենադարանի նվիրական հարկի ներքո եւ շուրջ մեկ տասնամյակ ամենայն նախանձախնդրությամբ ու սիրով ղեկավարեց հայ մտքի հոգեւոր կաճառի գործունեությունը:*

*Վաստակաշատ մշակութային գործչի վախճանը կորուստ է հայագիտության համար: Հրաչյա Թամրազյանը պիտի շարունակի ապրել սերունդների հիշողության մեջ՝ նշանակալի իր ավանդով ու գնահատելի ներդրումներով:*

*Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Ամենողորմ Տերը արարչական սիրով գթա հանգուցյալ Իր ծառային եւ երկնային երանական օթեւաններում լույսերի եւ խաղաղության մեջ ընդունի բարեհիշատակ Հրաչյա Թամրազյանի հոգին…*

*«Յիշեսցէ Տէր զհոգի նորոգ ննջեցելոյն եւ հանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան իւրոյ. Ամէն»*:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արեւելյան ծեսի ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցներին



Սեպտեմբերի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեպտեմբերի 11-ից 15-ը Մայր Աթոռում անցկացվող Արեւելյան ծեսի ուսումնասիրության ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Ներկայացնելով հյուրերին՝ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի «Զոհրապ եւ Կլարա» տեղեկատվական կենտրոնի տնօրեն, ընկերության համահիմնադիր Դանիել վրդ. Ֆինդիկյանը, իբրեւ Մայր Աթոռի միաբան, շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ գիտաժողովը Ս. Էջմիածնում գումարելու հրավերի եւ ջերմ հյուրընկալության համար:

Խոսք ասաց նաեւ ընկերության նախագահ Բռայեն Սփինքսը (Յեյլի համալսարան): Վերջինս Նորին Սրբությանը ներկայացրեց ընկերության առաքելությունը եւ Արեւելյան ծեսի ուսումնասիրության նպատակները:



Պրոֆ. Սփինքսը երախտագիտությամբ ընդգծեց, որ առաջին անգամ է գիտաժողովը Եկեղեցու պետի հրավերով գումարվում Եկեղեցու հոգեւոր կենտրոնում:

Սյնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը կարեւորեց գիտաժողովի գումարումը Ս. Էջմիածնում՝ ընդգծելով, որ նման հավաքները մեծապես նպաստում են միմյանց ավելի լավ ճանաչելուն, միմյանց ավանդույթներին, ծեսին եւ հոգեւոր արժեքներին հաղորդակից դառնալուն: Հայոց Հայրապետը գոհունակությամբ նշեց նաեւ, որ գիտաժողովը յուրահատուկ ներդրում է էկումենիկ շարժման աշխատանքներում՝ այս կապակցությամբ ուրախությամբ արձանագրելով Եկեղեցիների միջեւ տիրող այն սիրո ոգին, որ առաջնորդում է նման բարի գործակցության:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը հայտնեց գիտաժողովին մասնակից այն ծիսագետներին, որոնք մեծ ավանդ ունեն Հայոց Եկեղեցու ծեսի ուսումնասիրության եւ այն հանրայնացնելու գործում:

Իր խոսքում Նորին Սրբությունը հաստատեց, որ ներկա գիտնականների ձեռքբերումներով կրթվում են նաեւ Հայ Եկեղեցու հոգեւորականներ՝ նրանց հովանու եւ առաջնորդության ներքո շարունակելով իրենց ուսումնառությունը եւ գիտական աշխատանքը տարբեր համալսարաններում:

Վերստին հայրապետական օրհնությունն ու գնահատանքը փոխանցելով ներկաներին՝ Գարեգին Բ Կաթողիկոսն արդյունավոր աշխատանք մաղթեց գիտաժողովի աշխատանքներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ծիսագետների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին եւ ներկայիս գործունեությանը, Եկեղեցու ծիսական լեզվին եւ վանական կյանքի վերականգնման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը ընդունեց

*30 օգոստոսի*

### Գերմանա-հայկական ֆորումի նախագահության անդամներին

Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեց Գերմանա-հայկական ֆորումի պատվիրակությունը՝ գլխավորությամբ ֆորումի նախագահ, Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Ալբերտ Վայլերի:

Հյուրերին Մայր Աթոռում ընդունեց Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը՝ փոխանցելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը:

Նաթան սրբազանը բարձր գնահատեց երկու երկրների միջեւ ձեւավորված համագործակցությունը տարբեր ոլորտներում եւ ի մասնավորի՝ Գերմանա-հայկական ֆորումի աշխատանքը՝ ուղղված երկուստեք կապերի զորացմանը: Այս առիթով Նաթան սրբազանը խորին երախտագիտություն հայտնեց Գերմանա-հայկական ֆորումի անդամներին՝ Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ունեցած կարեւոր դերակատարության համար:

Նաթան արքեպիսկոպոսն իր խոսքում անդրադարձ կատարեց նաեւ Գերմանիայի ժողովրդի կողմից դավանվող համամարդկային հոգեւոր բարձր արժեքներին եւ այլ պետությունների եւ ժողովուրդների նկատմամբ դրսեւորվող մարդասիրական կեցվածքին՝ այս կապակցությամբ փաստելով այն ջերմ վերաբերմունքը, որ ցուցաբերվում է Գերմանիայի հայ համայնքի նկատմամբ:

Ֆորումի նախագահ Ա. Վայլերը եւս գոհունակություն հայտնեց առկա արդյունավետ գործակցության համար՝ կարեւորելով ֆորումի գործունեությունը երկու ժողովուրդների կյանքում:

Զրույցի ընթացքում Նաթան սրբազանը հյուրերին ներկայացրեց Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, ներկայիս ծառայությունը սոցիալական եւ կրթական ոլորտներում, երիտասարդների ներգրավվածությունը Եկեղեցու կյանքում:

Սրբազանը նաեւ պատասխանեց ֆորումի անդամների հարցերին, որոնք վերաբերում էին ընտանեկան արժեքներին, ՀՀ ԶՈՒ-ի հոգեւոր առաջնորդությանը, Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակին եւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ Հայ Եկեղեցու կողմից իրականացվող աշխատանքներին:

Հանդիպման ավարտին Նաթան արքեպիսկոպոսը բարի արդյունավորում մաղթեց ֆորումի նախագահության առաքելությանը:

*31 օգոստոսի*

### Բելգիայի խորհրդարանականներին



Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը Մայր Աթոռում ընդունեց Բելգիայի Թագավորության Խորհրդարանի պատգամավորներ Փոլ Դելվայիին եւ Զոե Ժենոյին՝ ուղեկցությամբ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի եւ գրասենյակի Եվրոպական հարցերի պատասխանատու Հեղինե Էվինյանի:

Նաթան արքեպիսկոպոսը, հյուրերին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, ուրախություն հայտնեց, որ տարեցտարի հարաբերությունները Հայաստանի եւ Բելգիայի միջեւ ավելի են սերտանում:

Սրբազան հայրը պատգամավորներին, իբրեւ Բելգիայի Խորհրդարանում Հայաստանի բարեկամների, շնորհակալություն հայտնեց այն կարեւոր ներդրման համար, որ ունեցել են Բելգիայի Խորհրդարանի կողմից անցյալ տարի Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւի որդեգրման գործում:

Սրբազանը հյուրերին ներկայացրեց նաեւ Ս. Էջմիածնի հիմնադրման պատմությունը եւ Հայոց Եկեղեցու գործունեությունը տարբեր ոլորտներում: Նա մասնավոր անդրադարձ կատարեց երիտասարդության կրթությանն ու դաստիարակությանն ուղղված ծրագրերին եւ եկեղեցաշինությանը:

Նաթան արքեպիսկոպոսը պատասխանեց խորհրդարանականների հարցերին, որոնք վերաբերում էին ղարաբաղյան հակամարտությանը, Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների եւ հատկապես հայ համայնքների վիճակին, տեղեկություններ փոխանցեց Հայ Եկեղեցու կողմից այդ համայնքներին եւ Հայաստանում ապաստանած սիրիահայերին կանոնավոր ցուցաբերվող զորակցության մասին:

### «Կենգուրու» եւ «Մեղու» մրցույթների առաջատարներին

Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեցին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված 2016 թ. «Կենգուրու. մաթեմատիկան բոլորի համար» եւ «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթների հաղթողները եւ ՀՀ մարզերում ու Արցախում լավագույն արդյունք արձանագրած դպրոցականները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից մրցույթների հաղթողներին ողջունեց եւ շնորհավորեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:



Նաթան սրբազանը բարձր գնահատեց պատանիների՝ գիտելիքներ ամբարելու եւ սովորածը կիրառության մեջ դնելու ցանկությունը: «Մեր երկրի առաջընթացի ամենակարեւոր գրավականը դարեր ի վեր եղել եւ մնում է գիտելիքը: Ե՛վ ճշգրիտ գիտությունները, ե՛ւ մայրենի լեզուն գիտելիքի հիման վրա տնտեսությամբ զարգացող մեր երկրում հավասարապես կարեւոր են: Արդեն ավանդաբար անցկացվող «Կենգուրու» եւ «Մեղու» մրցույթների միջոցով խթանվում է երեխաների հետաքրքրությունը մաթեմատիկայի, տրամաբանության եւ հայերենի նկատմամբ»,- նշեց Նաթան արքեպիսկոպոսը:

Մայր Աթոռում հյուրընկալված աշակերտներին նա հորդորեց շարունակել զինվել գիտելիքներով, որոնցով մեծապես կարող են նպաստել մեր ազգի եւ պետության ամրապնդմանն ու զորացմանը:

Հանդիպման վերջում Նաթան արք. Հովհաննիսյանը, շնորհավորելով ներկաներին գալիք սեպտեմբերի 1-ի կապակցությամբ, մաղթեց, որ Գիտելիքի օրը՝ կրթական նոր տարին, յուրաքանչյուրի համար լինի տոն եւ մեծ հաջողությունների, հաղթանակների բերկրանքի նոր սկիզբ:

*2 սեպտեմբերի*

### Ճապոնիա-Հայաստան խորհրդարանական բարեկամության լիգայի պատվիրակությանը

Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեց Ճապոնիա-Հայաստան խորհրդարանական բարեկամության լիգայի նախագահ Սեիշիրո Էտոյի գլխավորած պատվիրակությունը՝ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հյուրերին Մայր Աթոռում ընդունեց Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը՝ փոխանցելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը:

Բարձր գնահատելով Ճապոնիայի հետ Հայաստանի եւ հայ ժողովրդի սերտ հարաբերությունները՝ Նաթան սրբազանն իր ուրախությունը հայտնեց, որ Ճապոնիայի խորհրդարանում էլ կա մի խումբ, որի անդամներն իրենց Հայաստանի բարեկամներ են նկատում: «Մենք շատ ենք կարեւորում նման այցելությունները, որոնք հնարավորություն են տալիս մեր բարեկամներին՝ տեսնելու իրական Հայաստանը: Այսօր մենք, որպես երիտասարդ պետության, բայց հազարամյակների պատմություն ունեցող երկրի քաղաքացիներ, իրապես ցանկանում ենք մեր մասին ճշմարտությունը պատմել աշխարհին»,- ասաց սրբազանը՝ այս համատեքստում կարեւորելով նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարությունը:

Սրբազանը պատվիրակության անդամներին շնորհակալություն հայտնեց Հայաստանի հանդեպ անկախության տարիներին Ճապոնիայի բարեկամական վերաբերմունքի եւ զորակցության համար:



Ճապոնիա-Հայաստան խորհրդարանական բարեկամության լիգայի նախագահը, ակնածանք արտահայտելով հայ ազգի հոգեւոր եւ մշակութային արժեքների նկատմամբ, շնորհակալություն հայտնեց 2011 թվականին Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժից հետո, ի հիշատակ աղետի զոհ դարձած ճապոնացիների, Հայ Եկեղեցու կողմից կազմակերպված արարողության համար:

Բարձր գնահատելով Ճապոնիա-Հայաստան գործակցային եւ բարեկամական կապերը՝ պրն Սեիշիրո Էտոն հույս հայտնեց, որ ջանքերի մեկտեղումով այսուհետեւ էլ ավելի կամրապնդվեն երկու երկրների հարաբերությունները:



## Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին՝ նոր ուսումնական տարեշրջանի նախօրեին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի, կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ:

Ավանդական դարձած այս արարողությանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը, պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի անդամներ, կրթական պետական կառույցների ներկայացուցիչներ, տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների եւ մանկապարտեզների տնօրեններ, մարզպետարանների վարչության պետեր եւ նախարարության աշխատակիցներ:

Արարողությունն սկսվեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի ողջույնի խոսքով:

*Շարունակությունը՝ էջ 3*

# Տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2016-2017 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսությունը

Սեպտեմբերի 10-ին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի 2016-2017 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների տեսչական ու դասախոսական անձնակազմը, ճեմարանի սաներն ու այլ հրավիրյալներ:

Միջոցառումը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, որից հետո կատարվեց ուսանողների օրհնության կարգ:





2016-2017 թթ. ուսումնական տարվա կապակցությամբ ներկաներին իր խոսքն ուղղեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը.

«Այսօր մենք՝ ճեմարանականներս, այստեղ ենք եկել՝ հայցելու Հայոց Հայրապետի օրհնությունը եւ հաստատելու մեր պատրաստակամությունը՝ լծվելու աշխատանքի եւ ուսման, որ ի լրումն ժամանակի պիտի վերածվի ու թարգմանվի ծառայության:

Այս ամենն իրականացնելու համար մեզ առաջիկա տարվա ընթացքում սպասվում են մի շարք ծրագրեր, որոնց իրագործումն էլ առավել պիտի զարգացնի ճեմարանի կրթական մակարդակը:

…Հուսով ենք, որ Աստծո ողորմությամբ կկարողանանք իրականացնել մեր առջեւ դրված նպատակները…»:

Տեսուչը նշեց, որ 2016-2017 թթ. ուսումնական տարվա ծրագրերի իրականացումն սկսվել է դեռեւս ամռան ընթացքում, ճեմարանի գիտական խորհրդի կողմից ակտիվորեն քննարկվել են նաեւ մի շարք ծրագրեր, որոնք նպատակ ունեն զարկ տալու ուսումնական գործընթացի զարգացմանը: Այդ կարեւոր ծրագրերից է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կրթության վերածումը երկաստիճանից եռաստիճանի, ինչը շրջանավարտներին հնարավորություն կընձեռի պաշտպանելու թեկնածուական ատենախոսություններ եւ ստանալու աստվածաբանության թեկնածուի աստիճան: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ եւ հովանավորությամբ ստեղծվել է ճեմարանի գիտական խորհրդին կից գործող աստիճանաշնորհման մասնագիտական հանձնաժողով, որի կազմում են Հայաստանի եւ արտերկրի մի շարք հայագետներ, պատմության եւ աստվածաբանության դոկտորներ:

Հայր Գարեգինը տեղեկացրեց, որ առաջիկա տարում հրավիրվելու են մի շարք գիտաժողովներ՝ աստվածաբանության, Սուրբ Գրքի, պատմության եւ այլ բնագավառներում: Հոկտեմբերի 6-8-ն ընկած ժամանակահատվածում կանցկացվի Աստվածաշնչագիտական միջազգային գիտաժողով՝ նվիրված Ոսկան Երեւանցու տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին:

Գիտական կյանքը զարգացնելու համար նախատեսվում են մի շարք հրատարակություններ, կկազմակերպվեն արտերկրից եւ Հայաստանից հրավիրված մեծանուն գիտնականների դասախոսություններ, այլ ուսումնական հաստատությունների ուսանողների հետ համատեղ հանդիպումներ եւ քննարկումներ: Հայաստանյան «Կլոր սեղան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ կոնֆերանսների համար անհրաժեշտ տեխնիկայով վերազինված ընթերցասրահը՝ Կոմիտասի դահլիճը, կդառնա նոր ու զարգացած ռեսուրսների կիրառմամբ սեմինար պարապմունքների ու արտադասարանային հանդիպումների կենտրոն:

Հավարտ տեսչի խոսքի՝ ազգային երգերով հանդես եկավ ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հարություն Թոփիկյանի:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, ողջունելով հոգեւոր-կրթական հաստատության տարեմուտը, հույս հայտնեց, որ 2016-2017 թթ. տարին կլինի բարեբեր ու արդյունավոր եւ կպարգեւի արժանավոր շրջանավարտներ:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Արցախ կատարած այցին, ի մասնավորի՝ արցախահայության եւ Հայոց բանակի զինվորների քաջարի ոգուն եւ զորեղ հավատին: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ այդ ոգու ձեւավորման մեջ իր մասն ու բաժինը ունի նաեւ Հայոց Եկեղեցին՝ թեմերում սպասավորող հոգեւորականներով եւ բանակում իրենց նվիրյալ ծառայությունն իրականացնող գնդերեցներով:

Կարեւորելով եկեղեցականի նկարագրի կերտման գործում մեծ առաքելություն ունեցող ճեմարանի գործունեությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարի ընթացք մաղթեց հոգեւոր-կրթական հաստատություններին:

Տարեմուտի հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերգով:

Այս տարի Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններ ընդունվել է 72 սան, որոնցից 14-ը՝ Գեւորգյան ճեմարան, 25-ը՝ Վազգենյան դպրանոց, եւ 21-ը՝ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարան: Իսկ Քահանայից պատրաստման լսարանը համալրվել է 12 ուսանողով:

# «Ռենովաբիս»-ի 20-րդ միջազգային համաժողովը

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը Գերմանիայի Ֆրայզինգ քաղաքում տեղի ունեցավ Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու «Ռենովաբիս» կազմակերպության 20-րդ միջազգային համաժողովը: Կոնգրեսի գլխավոր թեման էր «Ավետարանի վկայությունները. Երկիր մոլորակի կերտումը»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ «Ռենովաբիս»-ի գլխավոր քարտուղար Գերարդ Ալբերտի հրավերով՝ համաժողովին Մայր Աթոռ Սբ Էջմիածինը ներկայացրեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

1997 թվականից ամեն տարի գումարվող այս կոնգրեսին բարձրաձայնվում եւ քննարկվում են Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում առանձնակի կարեւորություն ունեցող տարբեր խնդիրներ: Համաժողովը դարձել է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ երկխոսության յուրօրինակ հարթակ:

2016 թ. համագումարի ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի կյանքում կրոնական կազմակերպությունների ունեցած դերակատարությանը, անդրադարձ կատարվեց Եկեղեցի-հասարակություն հարաբերություններին եւ դրանց ազդեցությանը աշխարհի կերտման գործընթացի վրա:

# Ուղղափառ եւ արեւելյան ուղղափառ ոգեկանությանը նվիրված միջեկեղեցական գիտաժողով Իտալիայում

Սեպտեմբերի 7-ին Իտալիայի Բիելլա բնակավայրում գտնվող Բոզզե վանական համալիրում իր աշխատանքներն սկսեց Ուղղափառ եւ արեւելյան ուղղափառ ոգեկանությանը նվիրված միջեկեղեցական հերթական գիտաժողովը, որը նվիրված էր քրիստոնեական մարտիրոսագրությանն ու վկայությանը ներկա դարում՝ «Մարտիրոսություն եւ հաղորդություն» խորագրի ներքո:

Գիտաժողովի հիմնական նպատակն էր միջազգային հարթակ ստեղծել Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների համար՝ իրենց բնորոշ աստվածաբանության ու ոգեկանության արտահայտման նպատակով:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչեւ սեպտեմբերի 10-ը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս տարի Մայր Աթոռ Սբ Էջմիածինը գիտաժողովում ներկայացնում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների եւ հրատարակչական բաժինների տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը:

Գիտաժողովի ընթացքում առանձին նիստով անդրադարձ կատարվեց նաեւ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման փաստին՝ իբրեւ նոր ժամանակներում քրիստոնեական մարտիրոսության եւ հաղորդության ամենանշանակալի երեւույթներից մեկի:

# Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց…



*Սկիզբը՝ էջ 2*

Վարդան սրբազանը մաղթեց, որ ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն կրթության գործի նվիրյալների ջանքերը՝ հանուն նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական արժեքներով դաստիարակության եւ հայրենիքի ու ի Սփյուռս աշխարհի հայ ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

Արարողության ավարտին Նաթան արք. Հովհաննիսյանը կրթության ոլորտի պատասխանատուներին եւ մշակներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական սերը, պատգամն ու օրհնությունը՝ Գիտելիքի օրվա եւ նոր՝ 2016-2017 ուսումնական տարվա մեկնարկի առիթով:

Սրբազան հայրն ընդգծեց, որ կրթության մշակները պարտականություն ունեն սիրո միջնորդ դառնալու կրթության, գիտության, բարձր բարոյականության եւ մեր մատաղ սերունդների միջեւ: Իր խոսքում Նաթան սրբազանը մասնավորապես անդրադարձավ ուսուցչի առաքելության գաղափարին եւ մաղթեց, որ բոլոր աշակերտներն իրենց կյանքում մշտապես հիշեն իրենց ուսուցիչներին, որ բոլոր սերունդները սեպտեմբերի 1-ը դիմավորեն ուրախությամբ ու լիուլի ցանկություններով:

Վերջում Նաթան արքեպիսկոպոսը հայցեց, որ Տիրոջ օրհնությունը միշտ ուղեկից լինի ներկաներին եւ առաջնորդի կրթության ու գիտության մշակներին իրենց պատվական ծառայության մեջ:

# Գերագույն հոգեւոր

Սեպտեմբերի 6-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Ստեփանակերտում իր աշխատանքն սկսեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը:

Ժողովի բացմանը ԳՀԽ հոգեւորական եւ աշխարհական անդամներին հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Նորին Սրբությունը՝ մասնավոր իր գնահատանքը փոխանցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի Բակո Սահակյանին եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանին՝ Արցախի 25-ամյակի տոնախմբման այս օրերին ԳՀԽ ժողովը Լեռնային Ղարաբաղում անցկացնելու հրավերի համար: Նորին Սրբությունը կարեւորեց ԳՀԽ ժողովների պարբերական գումարումը հայոց տարբեր թեմերում, ինչը խանդավառություն եւ հոգեւոր կյանքի զորացման մեծ խթան է համայնքների համար:



*«Արցախ աշխարհի այս այցն ուխտագնացություն է մեզ համար. մի հող, ուր ամփոփված են մեր նախնյաց հիշատակները, որտեղ գտնվում են բազում սրբավայրեր: Եկել ենք մեր խոնարհումը բերելու, ծնրադրելու նվիրական այդ սրբավայրերում եւ մեր աղոթքն առ Աստված բարձրացնելու Արցախի ապահովության եւ արցախահայության բարօր կյանքի համար»*,- ասաց Գարեգին Բ Հայրապետը՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին իր աշխարհասփյուռ թեմերով ու համայնքներով միշտ եղել եւ մնում է արցախահայության կողքին՝ աջակից եւ զորակից Արցախին՝ իր արդար իրավունքների պաշտպանության գործում:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ այցի առիթով Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության թեմերի անունից Մայր Աթոռը վերստին հինգ հարյուր հազար ԱՄՆ դոլար գումար է փոխանցում Արցախին՝ արցախահայության կարիքների համար:

Հայոց Հայրապետն աղոթքով մաղթեց, որ Աստված Իր Աջի հովանու ներքո խաղաղության մեջ պահի Արցախ աշխարհը եւ բարօր ու անվրդով կյանք պարգեւի նրա քաջարի ժողովրդին:

Անդրադառնալով ժողովի օրակարգին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ քննարկվելիք խնդիրները մեծ կարեւորություն ունեն Հայոց Եկեղեցու ժողովական կառույցների գործունեության կանոնակարգման, Եկեղեցու առաքելության արդյունավետ կազմակերպման եւ առաջընթացի համար: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ԳՀԽ անդամներին՝ իրենց նվիրումի եւ հանձնառության համար, եւ արդյունավետ աշխատանք մաղթեց ԳՀԽ ժողովին:



Մինչ օրակարգի հարցերի քննությունը՝ ժողովականներն աղոթք բարձրացրեցին Գերագույն հոգեւոր խորհրդի վաղամեռիկ անդամ տիար Ալբերտո Ճերեճյանի (Արգենտինա) հոգու հանգստության համար:

Եռօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին Ազգային-եկեղեցական ժողովի, Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրությունների մշակման, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության լրամշակման ընթացքին վերաբերող հարցեր, ներկայացվեցին զեկույցներ եկեղեցական կառույցների եւ թեմերի գործունեության առնչությամբ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ զինվորների հետ



Սեպտեմբերի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ԳՀԽ-ի անդամների ուղեկցությամբ, այցելեց ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամաս, ուր հանդիպում ունեցավ հրամանատարական կազմի եւ զինվորների հետ:

Զորամասում Ամենայն Հայոց Հայրապետին ու ԳՀԽ անդամներին դիմավորեց եւ բարիգալստյան խոսքով ողջունեց ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը:

Պահպանիչ աղոթքից հետո Նորին Սրբությունն իր պատգամը բերեց զինվորներին՝ ուրախություն հայտնելով Արցախ իր այցի շրջանակներում ՊԲ զինվորների եւ զորահրամանատարների հետ հանդիպման հնարավորության համար. *«Եկել ենք մեր գնահատանքը եւ սերը արտահայտելու ծեզ, նաեւ բերելու ծեզ մեր խոնարհումը՝ ծեր իրագործած սխրանքների համար, որոնց մենք ականատես դարձանք ապրիլյան պատերազմի օրերին, թե ինչպիսի քաջազնությամբ դուք կասեցրիք ադրբեջանական զորքերի հարձակումը, հետ շպրտեցիք նրանց մեր սահմաններից: Մեր խոնարհումն ենք բերում քաջարի զինվորներին՝ մեր ազգի հերոս զավակներին, ովքեր իրենց կյանքով այդ օրերին պաշտպանեցին մեր հայրենիքը: Թող երկնքից միշտ լույս եւ օրհնություն իջնի նրանց շիրիմներին: … Փա՛ռք ծեզ, հայոց բանակի քաջարի՛ մարտիկներ: Վերստին փա՛ռք ծեր ընկերներին, որոնք հանգչում են Արցախի եւ Հայաստանի նվիրական եւ սուրբ հողում»*:

Նշելով, որ հայրենիքի պաշտպանությունը սրբազան ծառայություն է ազգի յուրաքանչյուր զավակի համար՝ Նորին Սրբությունը կարեւորեց հավատի զորացումը. *«Հավատով է, որ մեր ժողովուրդը տարել է իր պատմության բոլոր հաղթանակները՝ Վարդանանց պատերազմից սկսյալ մինչեւ Սարդարապատ եւ Արցախ: Արցախում ապրիլյան պատերազմի օրերին մեր զինվորների մեջ տեսանք այդ զորեղ հավատի ճառագումը:*

*… Շնորհիվ հաղթական ոգու եւ հավատի՝ մեր զինվորները կարողացան հաղթական ելնել այդ պատերազմից:*

*Սիրելինե՛ր, այս հողը սուրբ ու նվիրական է, որովհետեւ այստեղ ունենք նվիրական սրբություններ՝ դարերով կերտված հավատավոր մեր զավակների կողմից: Այս հողը սուրբ ու նվիրական է, որովհետեւ այստեղ հեղվել է քրտինքը, եւ նաեւ՝ արյունը մեր պատվական զավակների եւ մեր նախնիների: Այսօր դուք եք պաշտպաններն այս նվիրական հայրենիքի: Այս սահմանները պետք է անառիկ պահել՝ նվիրումով, հավատով եւ խիզախ հերոսական ոգով, որ կրում եք ծեր անծերում:*

*… Դուք մշտապես մեր աղոթքներում եք, մենք սիրում ենք ծեզ: Ձեզ սիրում է ազգի յուրաքանչյուր զավակ թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքի հեռավոր ափերում: Մեր ազգն իր սիրով ու ոգով, իր կարելիությունների ընծայաբերումներով եւ հանձնառություններով միշտ ծեր կողքին է: Ձեզ հետ է նաեւ մեր Եկեղեցին՝ իր հնարավորություններով ու կարողություններով, ինչպես նաեւ իր սպասավորներով»*:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Բարձրյալին, որ միշտ հաղթական լինի հայ զինվորի բազուկը, եւ Աստված անվտանգ եւ բոլոր փորձություններից հեռու պահի երիտասարդներին, որպեսզի փառքով ու պատվով ավարտելով իրենց ծառայությունը՝ վերադառնան իրենց ընտանիքներ՝ ուրախություն պարգեւելով իրենց ծնողներին ու ողջ ժողովրդին: Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերը յուրաքանչյուր զինվորի կյանքի ընթացքը զարդարի հաջողություններով ու հաղթանակներով, որպեսզի միշտ շեն լինի Հայոց աշխարհը, հզոր՝ Հայոց բանակը, եւ հայ ժողովուրդը խաղաղության մեջ ապրի ու կերտի իր բարօր կյանքը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները զրույց ունեցան զինվորների հետ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Գանձասարի վանք

Սեպտեմբերի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ուղեկցությամբ այցելեց Գանձասարի վանք, ուր տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն:

Արարողությանը ներկա էին ԼՂՀ նախագահի Բակո Սահակյանը եւ ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահի Աշոտ Ղուլյանը, ինչպես նաեւ՝ զինվորներ ու Վանք գյուղի բնակիչներ:

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում կատարվեց աղոթք, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին բարիգալստյան խոսքով ողջունեց Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը:



Պարգեւ սրբազանը բացառիկ եւ պատմական իրադարձություն նկատեց այն, որ Գերագույն հոգեւոր խորհրդի նիստն առաջին անգամ անցկացվում է Արցախ աշխարհում՝ մայրաքաղաք Ստեփանակերտում եւ Գանձասարի վանքում՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ այդ բարձր պատվին արժանացնելու համար:

*«Եկել եք զորակից դառնալու եւ գոտեպնդելու ծեր հոգեւոր հոտին՝ ծեր զավակներին եւ զինվորականներին, որպեսզի անսասան պահեն մեր սահմանն ու խաղաղությունը»*,- ասաց Արցախի թեմի առաջնորդը՝ հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու պատգամը:

Այնուհետեւ ներկաներին իր հայրապետական օրհնությունը



բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փառք եւ գոհություն բարձրացնելով առ Աստված՝ Արցախի անկախության 25-ամյակի տոնակատարությունների շրջանակներում Արցախ այցելելու հնարավորության համար.

*«Մենք եկել ենք մեր օրհնությունը բերելու Արցախի մեր քաջարի ժողովրդին, եկել ենք մեր զորակցությունը բերելու Արցախի իշխանություններին, եկել ենք օրհնելու Հայոց բանակի խիզախ մարտիկներին, որպեսզի նրանց բազուկը միշտ հաղթական լինի, եւ Աստծու օրհնությունն ու պահապան ս. այնպես եւ մեր կյանքի շինության գործում:*

*Մենք այսօր աղոթքի ենք կանգնած այստեղ, որպեսզի Աստված զորացնի հավատքը Արցախի մեր ժողովրդի հոգում, եւ հավատի հրաշքն ուղեկից լինի մեր ժողովրդին»*,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ այդ հավատքը հովանի լինի Արցախի հավատավոր ժողովրդին, եւ Աստված ապահով ու անվտանգ պահի Արցախի սահմանները, անսասան՝ հիմերը հայոց պետականության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ նախագահին՝ Արցախ այցելելու հրավերի եւ ջերմ հյուրընկալության համար, նաեւ իր գնահատանքը բերեց ԼՂՀ իշխանություններին՝ Արցախ աշխարհը շեն ու բարգավաճ պահելու բոլոր ջանքերի համար: Նորին Սրբությունը նաեւ աղոթեց Հայոց բանակի, նրա հրամանատարների եւ զինվորների համար:

# Խորհուրդը Արցախում



*խաչի զորությունը բոլոր ժամանակներում ուղեկից լինեն նրանց»*:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես անդրադարձավ աղոթքի կարեւորությանը, որը հավատքի զորացման աղբյուրն է: *«Մեր հայրերն այս սքանչելի Արցախ աշխարհում բազում աղոթատներ են կառուցել, որպեսզի աղոթքի միջոցով զորեղ լինի Արցախի ժողովրդի հավատքը, ինչը հրաշագործում է մարդկային կյանքում: Բոլոր հրաշքները կատարվում են՝ շնորհիվ զորեղ հավատքի: Դրանք միայն անիմանալի, անբացատրելի երեւույթներ չեն. հրաշքները մեր կյանքի իրական դրսեւորումներ են:*

*Մեր պատմության ընթացքում մենք բազում հրաշքներ ենք տեսել: Մարդկայնորեն անըմբռնելի իրագործումներ են տեղի ունեցել մեր ժողովրդի կյանքում՝ շնորհիվ Աստծու զորության եւ ներկայության. հաղթանակներ, որ արձանագրել ենք արցախյան գոյամարտի ժամանակ՝ նաեւ ապրիլյան պատերազմի ընթացքում:*

*Այս ամենի մեջ տեսնում ենք Աստծու ներկայության հզորությունը: Եվ մենք պիտի շարունակենք ապավինել Աստծուն, որպեսզի միշտ հաղթական լինենք ինչպես պատերազմի դաշտում,*

Վերջում Պահպանիչ աղոթքով Հայոց Հայրապետը հայցեց Երկնավորից, որ Արցախ աշխարհը ոչ մի փորձության չենթակվի եւ ապրի խաղաղության, սիրո ու առաջընթացի մեջ:

Հրաշափառի արարողությունից հետո վանքի տարածքում գտնվող Մատենադարանի շենքում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի նիստի շարունակությունը:

## Ավարտվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու վարչական, կանոնական եւ թեմական կյանքին վերաբերող հարցեր:

Ժողովի նիստերն ատենապետեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը եւ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանը:

Ժողովականներին նախ իրազեկվեց նախորդ ժողովում քննարկված հարցերի եւ դրանց վերաբերյալ կայացրած որոշումների կատարման ընթացքի մասին: Գերագույն հոգեւոր խորհրդին տեղեկացվեց, որ համաձայն նախորդ ժողովում կայացված որոշման, նկատի ունենալով Տիրոջ Ս. Գերեզմանի նորոգության հրատապությունը, ընդառաջ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի դիմումին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Պատրիարքարանին իր ընթացիկ բյուջեից կատարել է մեկ միլիոն ԱՄՆ դոլարի փոխանցում: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Հայրապետը շրջաբերական է ուղղել թեմերին՝ հանգանակելու եւ լրացնելու արդեն հատկացված գումարը, ինչին ի պատասխան՝ որոշ թեմեր եւ անհատ բարերարներ արդեն փոխանցումներ են կատարել, տվել նաեւ խոստումներ:

Ժողովի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկություններ փոխանցեց օգոստոսի 17-27-ը Հնդկաստան կատարած իր այցի վերաբերյալ: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հնդկաստանի բոլոր հայկական եկեղեցիները եւ եկեղեցապատկան կալվածքները Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության բացառիկ խնամատարության ներքո են: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությանը, կրթօջախի ուսումնական գործընթացին եւ պատանիների կացարանային պայմաններին՝ հավելելով, որ անհրաժեշտ բոլոր թելադրություններն արվել են՝ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու ուսումնական հաստատության կարգավիճակի ու կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ազգային-եկեղեցական ժողովի եւ Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրությունների մշակման հանձնախմբի աշխատանքի վերաբերյալ զեկույց ներկայացրեց իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը: Զեկույցի շուրջ լրացումներ կատարեցին հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը եւ հանձնախմբի անդամ Արշակ եպս Խաչատրյանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, քննարկելով ներկայացված փաստաթղթերի հայեցակարգը, գնահատանքով ընդունեց հանձնաժողովի զեկույցը եւ հորդորեց շարունակել կանոնադրությունների մշակման աշխատանքները:

Նկատի ունենալով ս/թ աշնանը գումարվելիք Եկեղեցականներկայացուցչական ժողովին առաջադրվելիք վերոհիշյալ կանոնադրական նյութերի աշխատատարությունը՝ խնդրանք ներկայացվեց երկարաձգելու փաստաթղթերի լրամշակման ժամկետը: Գերագույն հոգեւոր խորհուրդը, ընդառաջելով հանձնախմբերին, որոշեց ժողովը գումարել 2017 թվականի առաջին կեսին:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության փոփոխությունների մասին զեկուցեց Եզնիկ արք. Պետրոսյանը: Ժողովականները գնահատանքով ընդունեցին կատարված աշխատանքը, եւ հանձնարարվեց թեմերի առաջարկների հիման վրա նախապատրաստել եւ ներկայացնել կանոնադրական փոփոխությունների նախագիծը:



Ժողովին «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասո Դավիդյանը զեկուցեց Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի մասին: Տիար Դավիդյանն իրազեկեց, որ ընդառաջ Վեհափառ Հայրապետի առաջարկին՝ ստանձնել է ծրագրի աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը եւ արդեն իսկ հանդիպումներ է կազմակերպել թեմակալ առաջնորդների, եկեղեցական կառույցներում ծառայող հոգեւորականների եւ աշխահականների հետ: Ծրագրի իրագործման համար ձեւավորվելու է գործադիր եւ խորհրդատվական երկու մարմին, որոնք քննության են առնելու ծրագրի իրականացման ուղղություններն ու եղանակները:

Տեղեկացվեց նաեւ, որ Եկեղեցու կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրում Մայր Աթոռն օգտվելու է «Մաքքինզի ընդ Քոմփանի» խորհրդատվական ընկերության ծառայություններից:

Շնորհակալություն հայտնելով տիար Դավիդյանին ՝ Եկեղեցուն մատուցվող իր նվիրյալ ծառայության եւ կարեւոր հանձնառության համար, Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց ներկայացված զեկույցը եւ կատարելով կարեւոր դիտարկումներ՝ թելադրեց կատարել անհրաժեշտը՝ բարեհաջող իրականացնելու ծրագիրը:



Արցախի թեմի գործունեության մասին զեկուցեց թեմակալ առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը: Ներկայացվեց, որ 1930 թ. Բաքվի իշխանության ճնշման ներքո փակված պատմական Արցախի թեմը, որն այդ ժամանակ ուներ գործող 18 վանք, 112 եկեղեցի եւ 276 հոգեւորական, վերաբացվել է 1989 թ.՝ օրհնությամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի: Ցայսօր թեմում կառուցվել եւ վերանորոգվել են 70 վանք, եկեղեցի եւ մատուռ, կառուցման ընթացքում են 9 եկեղեցի եւ մատուռներ: Հրատարակվել է 86 կտոր հոգեւոր գրականություն:

Պարգեւ սրբազանը մասնավոր անդրադարձ կատարեց եկեղեցաշինական ծրագրերին՝ խոսելով նաեւ Ստեփանակերտի առաջնորդանիստ տաճարի կառուցման ընթացքից: Խոսվեց նաեւ թեմի հոգեւոր սպասավորների հովվական գործունեության եւ նոր հոգեւորականների նշանակման անհրաժեշտության մասին:

Գոհունակությամբ ընդունելով զեկույցը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն իր բարձր գնահատանքը հայտնեց Արցախի թեմի առաջնորդին եւ հոգեւոր դասին՝ իրենց նախանձախնդիր եւ նվիրյալ ծառայության համար:

Հայաստանի աստվածաշնչային ընկերության նախագահ Եզնիկ արք. Պետրոսյանը հաղորդեց ԳՀԽ անդամներին Աստվածաշնչի արեւելահայերեն թարգմանության խմբագրական աշխատանքների ավարտի ու այս առիթով նշանակված մասնագիտական հանձնախմբի դրական եզրահանգման մասին՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ Աստվածաշունչ մատյանի վերախմբագրված թարգմանության տպագրության համար: Ողջունելով կատարված աշխատանքը՝ Նորին Սրբությունը կատարեց անհրաժեշտ թելադրությունները՝ Ս. Գրքի նոր տպագրության կազմակերպման համար:

Գերագույն հոգեւոր խորհուրդը լսեց նաեւ եկեղեցական տոնացույցի բարեփոխման հանձնախմբի աշխատանքների մասին զեկույցը: Կատարվեց նաեւ կարգապահական հանձնախմբի կազմի փոփոխություն:

Ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության եւ գնահատանքի խոսքով:

*Շարունակությունը՝ էջ 6*

# Գերագույն հոգեւոր խորհուրդը Արցախում



Սկիզբը՝ էջ 5

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց առաջնագիծ

Սեպտեմբերի 8-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ գեներալ-մայոր Վարդան Բալայանի, այցելեց մարտական դիրքեր՝

Ապահով ծառայություն ցանկանալով զինվորներին՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց երիտասարդներին հաղթական վերադարձ իրենց օջախները:

Նորին Սրբությունը նաեւ շրջեց դիրքերում, ծանոթացավ պայմաններին: Հայոց Հայրապետը զինվորներին խաչեր նվիրեց, ինչպես նաեւ սրբապատկերով խաչ՝ զինվորների ուժերով կառուցված մատուռի համար:



հայրապետական իր օրհնությունը բերելով առաջնագծում իրենց ծառայությունն իրականացնող ՊԲ հրամանատարներին եւ զինվորներին: Նորին Սրբությանն ուղեկցում էին նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները:

*«Մեր օրհնությունը, գնահատանքն ու շնորհակալությունը ձեզ՝ նվիրյալ ձեր ծառայության համար, որ իրականացնում եք՝ անվտանգ պահելով մեր սահմանները եւ պահպանելով անդորրը Արցախի, նաեւ Հայաստանի մեր ժողովրդի»*,- իր խոսքում նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

## Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում կատարվեց Հանրապետական մաղթանք

Սեպտեմբերի 8-ին Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ եպիսկոպոսների, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Արցախ աշխարհի խաղաղության եւ բարօրության համար:



Արարողությանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, այլ պաշտոնատար անձինք, զինվորականներ եւ շուշեցիներ:

Հանրապետական մաղթանքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկաներին.

*«Գոհություն ու փառք ենք մատուցում Տիրոջը, որ առիթն ունենք Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների հետ գտնվելու օրհնյալ մեր Արցախ աշխարհում եւ ազատագրական մեր պայքարի խորհրդանիշը հանդիսացող Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում կատարելու Հանրապետական մաղթանք՝ հայցով առ Աստված, որ խաղաղ ու անվրդով պահի Արցախի եւ Հայաստանի սահմանները եւ Իր արարչական սերն ու խնամքը հովանի դարձնի հերոսական արցախահայությանը:*

*Այս օրերին մեր ժողովուրդը տոնախմբում է Արցախի անկախության 25-րդ տարեդարձը՝ պանծալի հոբելյանը մեր նորօրյա պատմության ամենանշանակալի իրադարձության: Մենք վերստին արժեւորում ենք մեր հաղթանակներն ու ձեռքբերումները եւ խոնարհումով հիշում մեր բոլոր հերոսներին, ովքեր իրենց կյանքն ընծայեցին հանուն Արցախի ազատության եւ մեր հայրենիքի ապահովության:*

*Նախորդ երկուսուկես տասնամյակները եղան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության զորացման եւ հաջողությունների աստիճանական ամրապնդման տարիներ: Ապրիլյան վերջին իրադարձությունները, սակայն, եկան հավաստելու, որ մենք տակավին մեծ անելիքներ ունենք Արցախի պետականության ամրապնդման եւ մեր հայրենքի սահմանների անվտանգության ապահովման գործում: Թշնամու չդադարող ոտնձգությունների պայմաններում մենք պիտի շարունակենք միասնաբար զորացնել մեր բանակը, շենացնել ու հզորացնել Արցախը:*

*Արցախահայությունը, հակառակ ամեն դժվարությունների, շարունակում է հերոսաբար տոկալ եւ իր հարազատ հողի վրա կառուցել իր բարօր ապագան:*

*Արցախի այս սուրբ հողում երբեւէ չեն տկարացել հայի հավատքն ու հայրենասիրությունը: Մեր երկարատեւ պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ թշնամիները բախվել են արցախահայության աննկուն կամքին եւ ընկրկել նրանց խիզախության առջեւ: Այստեղ ապրող մեր ժողովուրդը երբեք չի համակերպվել եւ չի համակերպվելու անարդարության ու բռնությունների հետ: Առաքելական մեր Սբ Եկեղեցին՝ աշխարհասփյուռ իր թեմերով ու եկեղեցական կառույցների ամեն հնարավորությամբ, ձեր կողքին է, սիրելի՛ քաջարի արցախցիներ, մշտապես սատար ու աջակից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգայնորեն ճանաչման եւ Արցախում արժանապատիվ կյանքի կառուցման ջանքերին:*

*Անցած 25 տարում Արցախը դարձել է ոգին մեր ժողովրդի միասնականության, մեր հաղթանակի, ազգային մեր զարթոնքի խորհրդանիշը: Արցախի շուրջ համախմբվել են ջանքն ու ջիղը համայն հայության, թեւ առել հաղթանակների վստահությունն ու տեսիլքը: Արցախը սրտում է համայն հայության, որը նրա անկախության պաշտպանն ու երաշխավորն է:*



*Տարակույս չունենք, որ արցախյան հիմնախնդիրը մեր ժողովուրդն առ Աստված ապավինությամբ առաջնորդելու է բարվոք լուծման: Առաքյալի խոսքի համաձայն. «Եւ այս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատքը»: Մեր կրած դառնությունների, զրկանքների ու չարչարանքների, մեր թանկ զոհողությունների դիմաց այս սուրբ հողում ընդմիշտ շարունակելու է ծաղկել ու զորանալ հայ կյանքը: Մեր վանքերում նորանոր ընտանիքներ են օրհնվելու, եւ հայ մանուկներ են մկրտվելու մեր եկեղեցիների սուրբ ավազաններում՝ նոր շունչ բերելով մեր կյանքին, շունչն ու ոգին վառ հավատքի, պայծառ մտքի, արարումի ու առաջադիմության»*:



Բարձրյալի զորակցության հայցով Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունը բերեց ԼՂՀ նախագահ տիար Բակո Սահակյանին եւ պետական ավագանուն՝ մաղթելով նոր ձեռքբերումներ իրենց հայրենաշեն գործերում: Գարեգին Բ Հայրապետն իր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց Հայոց բանակի սպաներին ու մարտիկներին՝ աղոթքով, որ Տերն ամուր ոգով ու հաղթական բազկով պահպանի հայրենյաց պաշտպաններին եւ Իր Աջի հովանու ներքո հեռու պահի վտանգներից ու փորձություններից:

Հայոց Հովվապետը նաեւ իր օրհնությունը բերեց Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանին եւ թեմի հոգեւոր դասին:

Օրհնելով Արցախի հերոսական ժողովրդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց շարունակել ապրել սիրով առ Աստված, առ Սբ Եկեղեցին եւ հայրենիքը, առաջ ընթանալ աներկբա հույսով, որ ցանկացած փորձության միջից էլ ավելի հաղթական են դուրս գալու՝ Բարձրյալի միջնորդով:

Վերստին աղոթք բարձրացնելով առ Աստված՝ հայրենիքի խաղաղության եւ սահմանների ապահովության համար, Վեհափառ Հայրապետը հայցեց Երկնավորի զորակցությունն Արցախի ժողովրդին: Նորին Սրբությունը մաղթեց, որ ամենակալ Աստված օրհնի Հայաստանն ու Արցախը եւ ապավեն լինի մեր ժողովրդին՝ ի կատար ածելու ազգային իղձերն ու նպատակները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցուն Տիրոջ սբ խաչելության պատկեր նվիրեց:

# ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

*Սկիզբը՝ թիվ 14-16*

Հովհ. Շիրազը, որ վարպետացել էր քառյակների ու խաղիկների գրության մեջ, բառախաղին կամ ձեւական այդպիսի հնարանքներին առանձնապես կարեւորություն չի տվել, այլ կենտրոնացել է բովանդակային կողմի՝ ասելիքի վրա, որպեսզի կուռ կառույցով ու բարեհունչ հանգավորումով խաղիկներն ունենան կենսական խոր բովանդակություն, ավարտուն միտք ու հնչերանգ: «Երգ Հայաստանի» գրքի 147-րդ էջում նա «Լինեի» խորագրով զետեղել է բանաստեղծություն, որի տները, ինչպես տեսանք, մտքի հարաբերականորեն անկախ միավորներ լինելով, խաղիկի կառուցվածք ունեն, իսկ էջ 152-ում «Ժողովրդական» վերնագրի տակ միավորված խաղիկները բաժանված են աստղանիշերով, որը նշանակում է՝ դրանք ավարտուն եւ ինքնուրույն գեղարվեստական միավորներ են՝ մանիների, հայրենների կամ սայաթնովյան ու աբովյանական բայաթիների պես: Թերեւս այս պատճառով էլ բանաստեղծը «Ժողովրդական» խորագրի տակ զետեղված այդ միավորների ինքնուրույնությունն ընդգծելու համար տրոհել է աստղանիշերով: Դրանք, սակայն, ինքնուրույն լինելով հանդերձ, ունեն Մ. Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» ժողովածուի փոքրիկ բանաստեղծությունների ոչ միայն արտաքին ձեւական նմանությունը, այլեւ ոգին ու շունչը:

Սակայն ձեւական տեսակետից կատարյալ թվացող այս կերտվածքները, այնուամենայնիվ, բովանդակային ինչ-ինչ անբռնելի պակասությունների պատճառով դեռեւս չունեն ավելի հասուն շրջանում գրված քառյակների բովանդակության ու ձեւի ներդաշնակությունը, կենսական խորությունն ու արվեստի կատարելությունը.

*Եղնիկ եմ ես արոտում,*
*Սիրտս քեզ է կարոտում,*
*Ձայն չես տալիս, չես գալիս,*
*Չես էլ սրտիս քարոտում...*

❖❖❖

*Հովեր, հավքեր, թեւ առեք,*
*Մինչեւ մեր տուն հեւ արեք,*
*Թե չտեսնեք իմ յարին՝*
*Ա՛խ, ձեր գլխին սեւ արեք:*

❖❖❖

*Չի հանգչելու երգը մեր,*
*Ցորեն ծաղիկ բերքը մեր,*
*Ջա՛ն, հավերժ է իշխելու*
*Ծով աշխարհում ձեռքը մեր:*

Շիրազ Հ., Երգ Հայաստանի, Եր., 1940, էջ 152

Սրանցից վերջինը թեեւ արտացոլում է խորհրդային առաջին տասնամյակների արարման ու կառուցման տարերքը, մարդկային բուռն ոգեւորությունն ու լավագույն ապագայի հանդեպ աներեր հավատն ու տիրոջ իրավունքի գիտակցումը եւ արտաքնապես՝ իր տաղաչափական ձեւով ու կառույցով թումանյանական՝

*«Մնացել է բերդը մեզ,*
*Հաղթանակի երթը մեզ,*
*Անց են կացել՝ ով կային,*
*Հիմի կըգա հերթը մեզ»*

քառյակի ներքին հանգավորումն ու երաժշտական հնչյակարգն է հիշեցնում, սակայն չունի ո՛չ Թումանյանի, ո՛չ էլ իր՝ Շիրազի հասուն շրջանում գրած քառյակների կենսական հարստությունն ու խորությունը, ինչպես նաեւ՝ «կատարման» վարպետությունը, որը բոլոր պարագաներում բարձր արվեստի գլխավոր հայտանիշն է: Անողոք ժամանակը, հենց հեղինակի ձեռքով, սրանց բացարձակ մեծամասնությունը չի փոխանցել հետագա գրքեր ու ժողովածուներ մի պարզ պատճառով: Այս խաղիկանման քառյակներից, որքան նկատել ենք, միայն երկուսն են ճեղքել ժամանակի անհաղթահարելի պատնեշները եւ արժանի եղել հայտնվելու հեղինակի ողջության օրոք հրատարակված վերջին ժողովածուներում: Դրանք են՝

*Սիրտ իմ, նավ ես, կյանքն է ծով,*
*Առաջ սուրա զընգզրով,*
*Բայց իմացի՛ր, որ չկա*
*Առանց ալիք ոչ մի ծով:*

❖❖❖

*Մեր սարերին եկավ ձյուն,*
*Կատարներին՝ ճերմակ քուն,*
*Ես՝ մոռացված մի կատար,*
*Ոչ տուն ունեմ, ոչ էլ քուն:*

(Վաղ շրջանում՝ 1934 թ. գրված այս քառյակներն առկա են թե՛ «Յոթնապատում» գրքում եւ թե՛ Երկերի 1-ին հատորի «Յոթնապատում քառյակներ» բաժնում):

Ճիշտ այնպես, ինչպես «Վերք Հայաստանի» վեպում Խ. Աբովյանը, այդպես էլ նրա հանճարեղ «Վերք»-ով ամենօրյա ոգեւորություն ապրող նրա գրական ժառանգորդ Հովհ. Շիրազը ամբողջ խորությամբ էր ըմբռնել չափածո գեղարվեստական խոսքի առավել հուզական-ներգործուն էությունը: Աղասին «Վերքի» տարբեր դրվագներում՝ Անիի ավերակներում կամ այլ վայրերում հաճախ է առավել հուզումնալից պահերին արտահայտվում բանաստեղծությամբ կամ բայաթիով, որ երբեմն երգում է «Քէշիշ օղլու զունով» (ձայնով կամ եղանակով): Հովհ. Շիրազը հետագայում՝ ստեղծագործական առավել հասուն շրջանում, ժողովրդական այս ձեւերը, ավելի հղկված, ըստ անհրաժեշտության գործածել է նաեւ իր ծավալուն պատմափիլիսոփայական պոեմներում՝ որպես հեղինակային քնարական մենախոսություն կամ հերոսներից մեկի



խոսք: Այդպիսի քառյակներով հատկապես առատ են «Անի» եւ «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական պոեմները, որոնց, ինչպես «Բիբլիական» պոեմի լեհ թարգմանիչ Բոգդան Գեմբարսկին է բնորոշել, միայն «կեղեւն է ազգային, իսկ միջուկը, իրոք որ, խորունկ համամարդկային» է:

Հենց այս նկատառումով է հեղինակը «Անի» եւ «Թոնդրակեցիները» պոեմներին տվել հետեւյալ ժանրային բնորոշումը. «Պոեմ՝ պատմափիլիսոփայական, փիլերգ՝ ազգային-համամարդկային»: Սրանց էջերում կերպավորված պատմական հերոսների կամ հեղինակային դրամատիկ խոսքում երբեմն հանդիպում են հույժ արդիական բովանդակությամբ, հուզական հզոր լիցքեր պարունակող կարճառոտ քառյակ-խաղիկներ, ինչպես, օրինակ, Օհան - Սմբատ արքայի թաքուն բարդ մտորումներն ու ներքին տվայտանքներն արտահայտող հույժ արդիական հնչողությամբ հետեւյալ կերտվածքները, որոնք բանաստեղծը չի զետեղել «Յոթնապատում» քառյակների գրքում կամ ուրիշ ժողովածուում.

*Շարունակությունը՝ էջ 8*

# Հայրենասիրական ողբ



*Սկիզբը՝ թիվ 11, 13-16*

Դ

Խաչատուր Կեչառեցին գործել եւ ստեղծագործել է մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում: Մեծ չէ Կեչառեցու բանաստեղծական ժառանգությունը, բայց այն հարուստ է թեմատիկ բազմազանությամբ: Նրա որոշ գործերում արտացոլվել են բանաստեղծի խոհերը՝ աշխարհի ունայնության, վերջի, ահեղ դատաստանի մասին: Նրան կյանքի վաղանցիկության միտքն է ալեկոծել, հոգու եւ մարմնի անվերջ պայքարին է անդրադարձել, խրատներ տվել, ողբացել հայրենի երկրի դառը վիճակը, երգել Ալեքսանդր Մակեդոնացու նման մի դյուցազնի գոյությունն իր օրերում: Կեչառեցին կյանքից կտրված բանաստեղծ չէ: Իր անձնական զգացումների եւ մտորումների հետ մեկտեղ նա խիստ վերապրում է հայրենիքի ծանր վիճակը: Ինչպես կտեսնենք հետո, Ստեփանոս Օրբելյանը Կեչառեցու դրդմամբ է գրել իր «Ողբ ի Սրբ. Կաթողիկէն» գործը: Կեչառեցու հայրենասիրական տրամադրություններն ամբողջովին դրսեւորվում են «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» քերթվածում, որը գաղափարական հագեցվածությամբ հայ միջնադարյան հայրենասիրական քնարերգության լավագույն նմուշներից է: Գրողը ծանոթ էր հայ գրականության մեջ եղած ողբերի ավանդույթին: Նա անդրադառնում է իր ժամանակի հրատապ հարցերին, քննում է հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձությունները, դեպքերը: Ահա թե ինչպես է գնահատում Մանուկ Աբեղյանն այս երկը. «Այս «Ողբը» կազմված է երկու մասից. երկուսն էլ արվեստի տեսակետից աննշան բաներ են, բայց արժեք ունեն իրենց պատմական բովանդակությամբ» (*Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, եր., 1970, էջ 271*): Գիտնականի մոտեցումը խիստ է ու չարդարացված:

Այժմ պարզենք, թե որն է եղել այն պատմական հենքը, որի վրա հյուսել է իր երկը Խաչատուր Կեչառեցին: Ինչպես արդեն նշել ենք, 1236 թվականից սկսած՝ Հայաստանը գտնվում էր մոնղոլական լծի տակ: Այն խիստ բացասաբար էր անդրադառնում նվաճված Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման ընթացքի վրա: Ավերածության մատնվեցին զարգացած գյուղատնտեսական շրջաններն ու վաճառաշահ կենտրոնները: Հայ կյանքի առաջընթաց զարգացումն այս ժամանակաշրջանում ոչ միայն խախտվեց, այլեւ զգալիորեն նահանջեց: Որոշ ժամանակ Սյունիքի Տարսայիճ իշխանն ընդարձակ սահմաններում Հայաստանի կառավարիչն էր (մեռել է 1290 թ.): Նրանից հետո Արեւելյան Հայաստանի վիճակն սկսեց վատանալ: Ղազան խանի իշխանության սկզբում՝ 1295 թվականին, նրա զորավար Նավրուզը, որ «յոյժ ատեցող էր քրիստոնէից եւ թշնամի եկեղեցեայց», հրամայում է քանդել բոլոր եկեղեցիները, կոտորել ընդդիմացող քրիստոնյաներին: Եվ այդպես էլ վարվել են, մինչեւ որ Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթումի միջամտությամբ Ղազան խանը հրամայել է դադարեցնել քրիստոնյաների հալածանքը:

Խաչատուր Կեչառեցու «Ողբի» մեջ պատկերված է ահա Արեւելյան Հայաստանի 1290-ական թվականների այս տխուր դրությունը: Նրա ողբը, ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, կազմված է երկու մասից: Առաջին մասում քերթողը ոչ միայն ողբում է ու գանգատվում մոնղոլական տիրապետությունից, այլեւ ցավով տրտնջում է նաեւ Հայ Եկեղեցու պառակտման իրողության դեմ, պառակտում, որ կարծես հայ ժողովրդի քաղաքական կյանքի մեջ մխրճված մի սեպ էր, հայրենիքի միասնությունը խախտող: «Ողբի» գրության տարիներին՝ 1298-99 թթ., Արեւելյան տան իշխանները, հոգեւորականներն ու գործիչները թուղթ ուղարկեցին կաթողիկոս Գրիգոր Անավարզեցուն՝ վտանգավոր համարելով նրա վարած քաղաքականությունը հայրենիքի համար: Միեւնույն մտքերի ու հուզումների արտահայտությունն է Խաչատուր Կեչառեցու «Ողբը»: Արեւելյան տան կողմից թուղթ էր ուղարկված Անավարզեցուն, եւ այժմ էլ Արեւելյան տան ավերումն էր ողբում Կեչառեցին: Վերջինս վճռականորեն դեմ էր Անավարզեցու կաթողիկոսական քայլերին, վերապրում էր այն իրողությունը, որ պառակտում կա «հոգեւոր հայրապետի» եւ նրան ենթակա եկեղեցիների միջեւ.

*Յայս ահագին աւուրս որ հասաք,*
*Ժամանակիս, որ պատահեցաք,*
*Զքաղցր արարիչըն դառնացուցաք,*
*Զերկինս արեամբ մեզօք ներկեցաք:*
*Զմայրն Աստուծոյ մեր տրտմեցուցաք,*
*Զմեր բարեխօսն բարկացուցաք.*
*Զեկեղեցեաց դրունս փակեցաք,*
*Զկանոնական զիրքն մոռացաք:*
*Մեք մեր ձեռօք մեզ դահիճ եղաք.*
*Հայհոյութեամբ զբերանս մեր լցաք,*
*Յանգեղջ չարիքըս շաղախեցաք,*
*Զաւազանին խորհուրդն ուրացաք:*

Մայիս Ավդալբեկյան, Խաչատուր Կեչառեցի, էջ 129

Ապա դառնությամբ, սրտի խոր մորմոքով շարունակում է.

*Հազարացոց ազգէն զերեցաք,*
*Յանօրինաց ձեռն մատնեցաք,*
*Արենարբու զօրաց նեղեցաք՝*
*Ճաղաթայից սըրէն խոսեցաք.*
*Խիստ արժանի եղաք՝ զինչ եղաք.*
*Վասն չարեացն, որ մեք գործեցաք:*

Նույն տեղում, էջ 130-131

Իսկ ո՞վ է մեղավոր, ինչո՞ւ է այդպես: Ահա այս հարցերն են ծագում ընթերցողի մեջ՝ կարդալով այս տողերը: Դրանց պատասխանը տալիս է հենց ինքը՝ Կեչառեցին՝ շարունակելով «Ողբը».

*Մեռան իշխանքն մեր ցանկալի*
*’Ի հւրանց որդիքն ի տղայ հասակի,*
*Սուգըն տիրեաց մեջ Իսրայէլի,*
*Լաց ’ւ աղաղակն մեծ Հռաքէլի:*

Նույն տեղում

Կեչառեցին եւս, ինչպես պատմահայր Մովսես Խորենացին, հայ ժողովրդի ողբերգական ճակատագիրը համեմատում է իսրայելցիներին բաժին հասած դառը վիճակի հետ: Եվ եթե իսրայելցիները, ինչպես տեսանք Խորենացու «Ողբ»-ում, իրենց կորուստների դիմաց ունեին իրենց ժառանգ-փոխարինողները, ապա Կեչառեցու համար մեծագույն ցավ է այն, որ մեր իշխանները չունեն իրենց հետեւորդները, իսկ առանց գործունյա իշխանների՝ միջնադարյան բանաստեղծը չի պատկերացնում երկրի վիճակը բարեկարգված: Նա սրտի մորմոքով խոսքն ուղղում է մոնղոլական տիրապետության օրոք հեղինակություն վայելող եւ երկրին ասպատակություններից հեռու պահող նշանավոր իշխաններին: Ողբալով Հայաստանի թշվառ դրությունը՝ քերթողը կարոտով է հիշում Սադուն Աթաբեկին, կյանքի է կոչում անցած օրերի գործչին՝ ականատես լինելու երկրի ծանր վիճակին եւ ձայնակից լինելու իր Ողբին.

*Շարունակությունը՝ էջ 8*

# Հայրենասիրական ողբը

*Սկիզբը՝ էջ 7*

*Սադո՛ւն, սիրած մեծ Ապաղանի,*
*Գոված ընտիր յամէն հանդիսի,*
*Զաչերըդ բա՛ց, զինչ Դամասկոսի,*
*Տե՛ս ըզգաւառս ի յերեմանի,*
*Զեկեղեցիքս ի մեծ վըտանգի*
*Ու զքահանայքս ի տարտարոսի...*
Նույն տեղում

Կեչառեցին անհուն կսկիծով է նշում Խաթլու-Բուղայի, ինչպես եւ նրանից առաջ՝ 1289 թվականին, Արղուն խանի հրամանով մահապարտված վրաց Դեմետրե թագավորի եղերական վախճանը.

*Զխաթլու-բուղայն յարեան հալաւի,*
*Զիւր աննըման պատկերն ի հողի:*
*Զարքայն չիշխեմ յիշել զվրացի՝*
*Զատլասերեսն ըզԴեմետրէի,*
*Որ դեռ քըրտունքն իվայր կու հոսի*
*Սիրտըն քաշած ու դեռ կենդանի:*
Նույն տեղում

Այնուհետեւ բանաստեղծը մեծարում է 14-րդ դարի սկզբներին Բաղդադի գրավման ժամանակ մեծ համբավ վայելած Հուլաղու խանի հայ զորավար Պռոշին.

*Զպարոն Պռօշըն՝ զարդ հեծելի,*
*Որ զերկաթի դուռն առնէր փոշի,*
*Աջու բազուկ էր Նոր Սիոնի,*
*Հիմըն հաստատ Հայոց հաւատի:*
Նույն տեղում

Սրանց շարքերում են «վեհազգի» Տարսայիճը, «ԶՄկդէմ, զՎասակ՝ զկորիւնք առիւծի», Հասան Խաչեցին, Հասանը՝ «զորդի Դօփի, Զհաւատարիմն եւ զերկիւղալի», որ՝

*Հանց ուժըղդակ էր ինքն յատենի,*
*Քան զՔրիստոսի նշանն ի բեմբի:*
Նույն տեղում, էջ 132

Մեռել են, այլեւս չկան նախկին հզոր ու հեղինակավոր դեմքերը, որոնց հետ ակամա հաշվի էին նստում մոնղոլները: Ի՞նչ է մնում այլեւս հայրենասեր բանաստեղծին, եթե ոչ ողբալ հայրենի երկրի ծանր վիճակը.

*Ավա՜ղ, թէ զո՞րն ասեմ ի լալի,*
*Զայն հին ու նորքն ի գերեզմանի:*
*Վա՜յ զմընացորդքըս՝ սուտ կենդանի,*
*Մակա՛ր չէաք ծնեալ յաշխարհի,*
*Մեք գերեցաք ու խիստ արժանի,*
*Մեր գերեդարձքըն չեն ի միջի:*
Նույն տեղում, 132-133

Սակայն նրա մեջ չի մեռել ապագայի հույսը. բանաստեղծն իր ողբը վերջացնում է մի աղոթք-մաղթանքով, որտեղ խնդրում է Աստվածամորը բարեխոսությամբ հիշել հայոց արի ու քաջ իշխաններին, նաեւ Ստեփանոս Նախավկային եւ փրկել հայրենի երկիրն ու ժողովրդին այս անտանելի վիճակից.

*Աստուածածի՛ն, կոյս տիրուհի,*
*Բարեխօսեա՛ Որդւոյդ միածնի,*
*Առցես ընդ հեզ զձայն յանապատի*
*ԶըՍտեփանոս զծաղիկըն խաչի*
*Զլուսաւորին հայոց ազգի...*
*Սոքօք հանդերձ աղաչեա՛ զՈրդի*
*Փըրկել ըզմեզ յազգէն Հագարի,*
*Զթագ եւ զաթոռ մեր Հայոց ազգի՝*
*Բարձր առնելով մինչ յօրըն վերջի,*
*Նընջեցելոցն ի հող տապամի...*
Նույն տեղում, էջ 133

Թվում է, թե հենց Խաչատուր Կեչառեցու մտքում է ծագել Հայաստանի կենտրոնում հայկական քաղաքական իշխանությունը վերականգնելու գաղափարը, եւ նրան ձայնակցել է ժամանակակիցը՝ Ստեփանոս Օրբելյանը:

## Ե

Շնորհալին կարծես նախապատրաստել էր Օրբելյանի «Ողբ ի Սրբ. Կաթուղիկէն» գործը՝ առաջին անգամ «Ողբ Եդեսիոյ» քերթվածում արծարծելով ու բարձրացնելով Վաղարշապատի Ս. Կաթուղիկեի անունը եւ հետեւելով Գրիգոր Լուսավորչի տեսիլքին: Եվ իսկապես, Շնորհալու քնարն առանց արձագանքի չմնաց. մեկուկես դար հետո Ս. Կաթուղիկեի վիճակը ողբաց Ստեփանոս Օրբելյանը:

Հեղինակն այն գրել է 1300 թվականին՝ Խաչատուր Կեչառեցի Վարդապետի խնդրանքով: «Ողբի» բուն վերնագիրը հետեւյալն է. «Բան բարառնական, ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղականք եւ ձայն աշխարհականք՝ լեալ անհուն հեծեծանք վասն աւերման աշխարհիս Հայոց եւ բնաւին սպառելոյ հայրապետութեան եւ թագաւորութեան համագունդ իշխանութեան. Շարեալ չափաբան բերմամբ, հոմերական արհեստիւ ի Ստեփանոսէ Սիւնեաց այցելուէ՝ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցւոյ»:

Թե ինչ շարժառիթների հիման վրա է Օրբելյանը գրել իր այս ողբը, մեզ անհայտ է: Հայտնի է միայն, որ նա մի երկար ուղեւորություն է ունեցել Տաթեւից դեպի Կիլիկիա: Եվ, անշուշտ, այդ ժամանակ էլ եղել է Վաղարշապատում: Հայտնի է նաեւ, որ նա երեք ամիս մնացել է Ադանայում. Հայոց հայրապետական գահի թափուր լինելը, Կոստանդին Բ Պրոնագործի ապօրինի գահընկեցությունը նրա վրա խիստ տխուր ազդեցություն են թողնում, հուսահատեցնում: Գիտենք նաեւ, որ 1293 թվականին տեղի են ունենում տխուր դեպքեր՝ հայոց հայրապետական աթոռանիստ Հռոմկլա բերդի անկումը, Ստեփանոս կաթողիկոսի գերվելը Եգիպտոս, հայրապետանոցի կողոպտվելը, ս. Լուսավորչի աջի եւ այլ սրբությունների տարագրվելը, որոնք, ինչպես Օրբելյանն է նշում, «աղեցաւ եւ լերդախոց» արին իրեն: Սրանց գումարվում են նաեւ մի շարք անձնական դժբախտություններ: 1291 թվականին նա զրկվում է հորից՝ Տարսայիճ իշխանից, տեղի են ունենում ընտանեկան պառակտումներ, հաջորդում են թշնամի եպիսկոպոսների մատնությունները, թաթարների ծանր հարվածները եւ այլն, որոնք էլ միահամուռ կերպով արթնացնում են նրա մեջ բողոքի եւ տրտունջի ձայնը: Օրբելյանի սրտի մեջ կուտակված տխուր տպավորություններն էլ, ահա, կարծես նախապատրաստում են Ողբը: Եվ որքան էլ անպաճույճ է լեզուն, որքան էլ դժգույն են պատկերները, այնուամենայնիվ, այդ ողբի մեջ մենք տեսնում ենք իր ժամանակի ոգին:

*Շարունակելի*

***Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

# ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

*Սկիզբը՝ էջ 7*

*Ազգս քիչ է՝ այս է ցավս,*
*Կեսն էլ գերի՝ պարզ է ցավս,*
*Իմ ախպերն էլ ախպերս չէ,-*
*Վանից մինչեւ Կարս է ցավս:*

*Ազգս քիչ է՝ ոսոխը շատ,*
*Ազգից խլված մեր հողը շատ,*
*Ա՜խ, գեթ Անին մնար հայոց,-*
*Հայոց արյուն խմողը՝ շատ...*
Շիրազ Հ., Անի, ԵՊՀ հրատ., Եր., 2011, էջ 155



Բոլոր դեպքերում հայ գրականության մեջ լավագույն օրինակները, անշուշտ, թումանյանական քառյակներն են, եւ ինչպես չափածո մյուս ժանրաձեւերի կիրառման մեջ, մարդու եւ մարդկայինի վերաբերյալ համամարդկային խոհեր, հայրենիքի ու ժողովրդի պատմական ճակատագրի, նրա ներկայի ու գալիքի մասին փիլիսոփայական խոհեր մարմնավորող հրաշակերտ բանաստեղծություններ, տարատեսակ մեծարժեք պոեմներ ու էպիկական ասքեր, լեգենդներ ու բալլադներ, առակներ եւ այլն, քառյակի ժանրում էլ նախորդ ժամանակների գեղարվեստական նվաճման բարձրակետը Մեծ Լոռեցու ստեղծագործությունն է, որի հիմքի վրա արգասավորվել են Ե. Չարենցի, ապա եւ Հովհ. Շիրազի քառյակները՝ այս ժանրում մեր բանաստեղծական մտքի զարգացման նորագույն շրջանի հզոր փայլատակումներն ու ձեռքբերումները:

Ուրեմն՝ Թումանյանը վերջակետ չէ, այլ հարատեւ սկզբնարար շարունակություն:

Հովհ. Թումանյանն ինքը գրողին գնահատելիս պահանջում էր «օբյեկտիվ ու հարգալից վերաբերմունք», համոզված էր, որ կիրթ, գեղարվեստական ճաշակ ու առողջ գեղարվեստական հասկացողությունն են որոշելու գրողի իրական մեծությունն ու իսկական տեղը: Ռ. Պատկանյանի առիթով ամենայն հայոց բանաստեղծը հանճարեղորեն է բանաձեւել հանգամանքների դերը գրողի կայացման ու նրա ստեղծագործության գեղարվեստական որակի մեջ՝ նրանց վերագրելով գլխավոր դերակատարություններից մեկը: Բարձր գնահատելով Ռ. Պատկանյանի ռազմի քնարը՝ «տարաշխարհիկ» այդ գրողի մյուս ստեղծագործություններում իր նկատած թերությունները Թումանյանը համարել է ոչ թե տաղանդի պակասության, այլ «հանգամանքների» ներգործության հետեւանք:

Նույն կերպ է նա գնահատել նաեւ իր առավելությունները: 1916 թ. օգոստոսի 24-ին Բաթումից Բաքու՝ Ցոլակ Խանզադյանին հասցեագրած Թումանյանի նամակում կարդում ենք. «Այո՛, Գամառ Քաթիպան անպայման տաղանդավոր մարդ է, բայց եթե նա քիչ է ազգային բանաստեղծ՝ էդ պակասությունը իրենը չի, տաղանդի պակասությունը չի, այլ հանգամանքների, ինչպես եւ իմը չի էն առավելությունը, որ ես ավելի եմ ազգային, այլ դարձյալ հանգամանքներինը» *(տե՛ս Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, ՀՀ ԳԱԱ հրատ, հ. 10, Եր., 1999, 249-250)*:

Այնուամենայնիվ, ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի ժամանակներն ու նրան շրջապատող հանգամանքներն այնպիսին էին, որ նա ազնիվ միամտությամբ կարծում էր, թե հայ ժողովուրդն ամուր կառչած է իր պատմական հայրենիք-բնօրրանին, եւ ավելի հեշտ կլինի նրան տեղահան անել ու դուրս շպրտել Էջմիածնից ու Արարատյան դաշտից, քան Արաքսի ու Եփրատի մեր նվիրական ու սրբազան հովիտներից՝ Ալաշկերտից ու Ջիրավից *(տե՛ս Թումանյան Հ.,* Մեր սրբազան հովիտները, նույն տեղում, հ. 7, Եր., 1995, 164-166), որոնցից արդեն մեկ դար զրկված ենք ազգովին:

Հովհ. Թումանյանը չէր էլ կարող հավատալ, թե հայությունը երբեւէ կունենա պատմական հայրենիք-բնօրրանի ու իր մատնանշած սրբազան գետերի ու հովիտների, լեռների ու լճերի, բնակավայրերի այնպիսի ծանրածանր կորուստ, ինչպիսիք ունեցան իր հաջորդներ Չարենցն ու Շիրազը:

Ընդհակառակը, 1915 թ. ամռանը գրած «Վան ու Երեւան» հրապարակախոսական հոդվածում համոզմունք էր հայտնում, թե կիաղթանակի իր «բնական ռուսասիրությունը», եւ ինչպես շուրջ հարյուր տարի առաջ ռուսական զորքը գրավեց Երեւանը, այդպես էլ հիմա կգրավի Վանը, եւ հայության երկու հատվածները կմիավորվեն մեկ ու միասնական հայրենիքում *(տե՛ս Թումանյան Հ., Վան ու Երեւան, նույն տեղում, էջ 167-169)*: Սակայն բաղձալի երազանքի իրականացման փոխարեն նա տեսավ «բերանն արնոտ մարդակերի» նոր զարհուրելի ոճիրները եւ երկու անգամ՝ 1914 թ. աշնանն ու 1915 թ. ամռանը, Արեւմտյան Հայաստանում լինելուց եւ Մեծ եղեռնի սարսափներն անձամբ տեսնելուց հետո գրեց իր քառյակները:

Եվ եթե սիրելի ծննդավայր Կարսն ու ողջ «կապուտաչյա հայրենիքը» կորցրած Ե. Չարենցն անձամբ էր տեսել, որ «Արյուն է եղել աշխարհում, եղել է եղեռն ու կռիվ» եւ «եղեռնի սեւ թաթն» է տեղահան արել ու հայրենազրկել իր ժողովրդին, ու անթեղված «վիթխարի ցավով» էր տանում ծանրածանր կորուստները, բայց հայտնի կաշկանդումների ու կաղապարների պատճառով դժվարությամբ էր արտահայտվում նրանց մասին, ապա Շիրազը, հատկապես 1950-ական թթ. հետո՝ հետստալինյան հարաբերական ազատության պայմաններում, նույն հայրենացավի աղաղակը այլաբանորեն կամ հաճախ բաց տեքստով հնչեցնում էր իր տարաժանր ստեղծագործություններում՝ լայնածավալ պոեմներում, մեծ ու փոքր բանաստեղծություններում, նաեւ քառյակներում: Համեմատաբար փոխվել էին ժամանակներն ու հանգամանքները:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 15.9.2016 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**